




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4437

1925



08(47925)

3-24

Հ Կ Կ Կ Կ ԱԳԻՏ ԲԱԺԻՆ

Պատկերներ բոլոր լուսանկարների, միացել է.

318

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ

5-րդ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ԹԵԶԻՍՆԵՐ

Յ Ե Ր Ե Վ Ո Ր Ո

1925







կիսաճորտատիրական պայմաններ գոյութիւն ունեւին, իսկ գեմատվային ինքնավարութիւնից Անդրկովկասն այնպէս ել գուրկ միաց, թեև Ռուսաստանում վերջինս կազմակերպվել եր դեռ 1864 թվականին: Անդրկովկասի տեղային իշխող դասակարգերը նման գրութիւն գեմ վոչ միայն չեյին բողոքում, այլ ցարի անդրկովկասյան քաղաքականութիւնն ամեն կերպ պաշտպանում եյին, վորովհետև այդ քաղաքականութիւնը նրանց հնարավորութիւն եր տալիս բանվորին, գյուղացուն և աշխատավոր ինտրիգենտին անարգել շահագործել ու ճնշել: Ծիշտ ե, ցարի կառավարութիւնն ստրկացած կալվածատերերն ու կապիտալիստները Անդրկովկասի ապրած ծանր վիճակի շուրջը յերբեմն կոկորդիլոսյան արցունք եյին թափում, սակայն կովել նրա անարգ ուժի մի դեմ վոչ ցանկութիւն ունեւին և վոչ համարձակութիւն: Նրանք քաջ դիտակցում եյին, վոր կռիւլ միայն աշխատավոր ժողովրդի ուժերով ե հնարավոր և վոր բանվորի ու գյուղացու նվաճած ամեն մի նոր դիրք, ցարի գմի գեմ ուղղած լինելով, իր յերեք քառորդով ել անմիջապէս իրենց սեփական իշխանութիւնն ունեւ և ուղղվելու: Հակառակ ազդային հետադեմ բոլոր կուսակցութիւններին լիբերալ հայտարարութիւններին, պետք ե ընդունել, վոր ցարի գմի հիմքն Անդրկովկասում վոչ թե ուսական պաշտոնեութիւնն եր, այլ՝ տեղային շահագործող դասակարգերը:

Այդ սեփականից, հատկապէս ծանր եր Յերեանի նահանգի բնակչութիւնն գրութիւնը: Գործարանային արդունաբերութիւնից և պրոլետարիատից գուրկ, նման ավելի հարեան Պարսկաստանին, քան Ռուսաստանի առաջագետ շրջաններին, կալվածատերերի ու գյուղական բուռնցքների, առեւտրականների ու հոգևորականների, վոստրիկանների ու չինովնիկների ձեռքում խեղդված այդ նահանգը հասարակական կյանքից ու հեղափոխական շար-

ժութներից կատարելապէս ազատ եր և իր գոյութիւն շատ կողմերով միջնադարյան մի յերկիր եր հանդիսանում, վորտեղ նորածին կապիտալն իր կուսակման վանդական ձեւեր գործադրելու ամենալայն հնարավորութիւններ ունեւ: 20-րդ դարի սկզբում Յերեանի նահանգը Սուրբուկյանի և Աստրովսկու հերոսների ազատ գործունեւութիւնն ամենալայն ասպարեզ եր ներկայացնում: Հատկապէս ծանր պայմաններ եր ապրում թիւրք բնակչութիւնը, վորը 97 տոկոսով անգրագետ եր և կալվածատերերի ու բուռնցքների ձեռքում կատարելապէս ստրկացած:

19-րդ դարի վերջին քառորդում ել ժողովրդական մասսաների հասարակական-քաղաքական գոյութիւնն պայմանները, ինչպէս և նրանց նյութական գրութիւնը շուրջակի բարեկամման չենթարկվեցին: Հայերի մեջ այդ շրջանում առաջացած ազդային կուսակցութիւնները վոչ թե տեղային հայ բանվորի և գյուղացու շահերի պաշտպանութիւնը եյին հոգատարված, այլ վերջիններիս իրենց ձեռքում մի կույր գործիք եյին դարձրել՝ անդրկովկասյան հայ բուրժուազիայի և ցարական կառավարութիւնն նվաճողական ծրագրներն իրականացնելու համար: Յարի գմի գեմ նրանք վոչ միայն չեյին կովում, այլ և մասսաների մեջ այն միտքն եյին տարածում, վոր միայն «ուսաց կառավարութիւն», այսինքն՝ ցարի կառավարութիւնն միջոցով հայ ժողովուրդը կարող ե ապստոլութիւն և բարեկեցիկ վիճակ ձեռք բերել: Հակահեղափոխական այս միջոցառման առանձնապէս սնտանելի դարձավ 90-ական թվականների վերջերից, յերբ մեր հասարակական կյանքը 90 տոկոսով դաշնակցութիւնն ձեռքն ընկավ: Գիտակցաբար թե անդիտակցաբար իր գոյութիւնն առաջին որերից սկսած, դաշնակցութիւնը մերթ ցարի, մերթ յերոսական բուրժուազիայի գործակառարն և յեղել և այն բոլոր



յերկրներում, վորտեղ իր կազմակերպութիւններն և ստեղծելէն յետոյ զեկալար մարմիններն ամբողջապէս կապիտալիստների ու բուռնացիների, խանութպանների ու հողերականների ձեռքում են գտնվել և այսօր ել նրանց մենաշնորհն են կազմում: Տառնյակ տարիներ շարունակ այդ կուսակցութիւնը ժողովրդական ու աշխատավորական, նույն իսկ հեղափոխական ու սոցիալիստական և ձևացել, վորպէսզի աշխատավոր մասսաների շարքերը մոտք գործելու հնարավորութիւն ունենա, խանգարի նրանց դասակարգային կազմակերպման ու քաղաքական դաստիարակման գործին, ինչպէս և նրանց միացմանը Անդրկովկասի և Ռուսաստանի բանվորի ու գյուղացու ազատագրման շարժումներին: Անդրկովկասյան հայ իրականութեան մեջ դաշնակցութիւնը մոնոպոլիստ կուսակցութիւն է դառնում հենց այն ժամանակ, յերբ Ռուսաստանում և Անդրկովկասում բանվորի և գյուղացու ազատագրական շարժումները մասսայական բնույթ են ստանում և անմիջապէս ցարիզմի դոյութեան դեմ են ուղղվում: Էնչ մի վոստիկանութիւն և վոչ մի ժանդարմերի յերբեք ընդունակ չէր լինի հայ աշխատավորութեան համառուսական բանվորագյուղացիական շարժումներից այն աստիճան կտրել, քաղաքականապէս բթացնել, ձեռներեցութիւնը նրանց շարքերում սպանել և բուրժուազիայի ձեռքում նրանց ստրկացնել, ինչպէս այդ կատարեց դաշնակցութիւնը՝ քողարկված հեղափոխական ու սոցիալիստական ձգտումներով:

Հակահեղափոխական լինելը բուրժուական կուսակցութիւնների համար մի բնական սրենք է: Դաշնակցութիւնն ել, վորպէս բուրժուական կազմակերպութիւն, մեր դարում չէր կարող հակահեղափոխական չլինել, իսկ վորպէս մի թույլ ու փոքր կուսակցութիւն, վորի ծրագրի իրականացումը միջազգային խոշոր խնդիրների լու-

ծում էր պահանջում և վորը յերբեք չի յել յերազել՝ սեփական ուժերով իր ծրագրի իրականացմանը ձգտել, միջազգային բուրժուազիայի կամ ցարի կառավարութեան ձեռքում նա անհրաժեշտորեն կույր գործիքի դեր էր կատարելու: Սակայն, հայ իրականութեան և ամբողջ անդրկովկասյան իրականութեան մեջ դաշնակցութեան շարիքը վոչ թէ նրա բուրժուական ու հակահեղափոխական եյութիւնն է յեղել, այլ այն, վոր սոցիալիզմի ու հեղափոխականութեան փետուրներով դարգարված, Հայաստանի բանվորին և գյուղացուն քաղաքականապէս սպանել է և խանգարել նրանց միացմանը Ռուսաստանի հեղափոխական շարժումներին: Մինչև 1920 թ. Հայաստանի բանվորն ու գյուղացին քաղաքականապէս անգրագետ էին, իրենց դասակարգային շահերին անգիտակից և կատարելապէս անկազմակերպ վիճակ էին ապրում: Հատկապէս ինչ 1905 թ. հեղափոխութեանն է վերաբերում, դաշնակցութեան ձեռք առած միջոցների շնորհիվ Հայաստանի շատ շրջաններում բանվորներն ու գյուղացիներն այդ շարժմանը վոչ միայն չմասնակցեցին, այլ նրա մասին նույն իսկ զաղափար չունեցին: Դաշնակցութեան իշխանութիւնը Հայաստանում մինչև 1917 թ. հեղափոխութիւնն այն հետևանքն ունեցավ, վոր նրա աշխատանքի շնորհիվ հայ բանվորն ու գյուղացին իրենց կազմակերպման և իրենց ազատագրական շարժման գործում յերկու տասնյակ տարով հետ ընկան, յերկու տասնյակ տարով ուշացան: Աշխատավոր մասսաների հանդեպ զժվար է մի այլ վոճիր կատարել, վորն իր չափերով ու իր կործանիչ հետևանքներով դաշնակցութեան հակահեղափոխական գործին գերադանցել:

Յերևանի նահանգում այս եր անո բանվորի և գյուղացու դրութիւնը, յերբ սլայթեցին 1917 թ. յերկու հեղափոխութիւնները և յերբ — մի տարի հետո, 1918 թ.



հուլիսի վերջերին — Յերեանի նախկին նահանգում դաշ-  
նակցությունը սկսեց իշխել վոչ միայն վերպես քաղաքա-  
կան կուսակցություն, այլ և վերպես պետական իշխա-  
նություն:

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Նախկին Ռուսաստանի սահմաններում հայկական  
պետությունը ստեղծելը դաշնակցության ծրագրի ու  
պլանների մեջ յերբեք չի մտած: Բավական չէ, վոր  
ցարի չինովնիկների ձեռքում դաշնակցականները փա-  
ստորեն ստրկացած էյին և ցարիզմի դեմ կռվել վոչ ցան-  
կանում էյին և վոչ կարողանում: Նրանց ստրկությունն  
չատ ավելի մեծ չափով նրանում և արտահայտվում, վոր  
այդ կուսակցության ղեկավարները հողեպես ել միշտ  
այն աստիճանի ստրուկ են յեղել, վոր յերբեք չեն հա-  
մարձակվել անգամ յերազել այն մասին, վոր Հայաստա-  
նի ներկա տերիտորիան ել իրենց ծրագրած «մեծ ու  
միացյալ Հայաստանի» սահմանների մեջ մտնի: Ինչպես  
սրբերի հպատակությունն ընդունած և նրանց ստրկա-  
ցած հավատացյալ կաթողիկը, չնայած իր գլխին թափ-  
վող բոլոր դժբաղդություններին, սրբերի դեմ վոչ միայն  
չի կռվում, այլ նույն իսկ չի համարձակվում նրանց մա-  
սին վատը կարծել, այնպես ել դաշնակցության ղեկա-  
վար շրջանները՝ ցարիզմի այդ կաթողիկ հավատացյալ-  
ները, ցարիզմի դեմ վոչ թե չեն կռվել, այլ յերբեք հա-  
մարձակություն չեն ունեցել գեթ յենթադրելու, վոր  
նախկին Յերեանի նահանգը մի ուր Հայաստանի հանրա-  
պետության կարող և վերածվել: Նույն իսկ 1905 թ.  
ոգոստոս-սեպտեմբեր ամիսներին, յերբ հեղափոխական  
կաթսան արդեն յեռում եր և յերբ իր գոյությունը վեր-  
կելու համար ցարի կառավարությունը ժողովրդին ան-

վերջ զիջումներ եր անում, նույն իսկ գերագանցորեն  
հեղափոխական այդ որերում դաշնակցության ղեկավար-  
ները հեղափոխական շարժմանը հեզնանքով էյին վերա-  
բերվում, նրա հողթանակին չէյին հավատում և բոլոր  
հայերին հրավիրում էյին թողնել այդ «մանկական խա-  
ղերն» ու «հիմարությունները» և դաշնակցության ղե-  
կավարությամբ Տաճկահայաստանում ազգային պետու-  
թյուն ստեղծել, ուր յենթադրում էյին տեղափոխել Անդր-  
կովկասի ամբողջ հայությունը:

Յարի կառավարությունը հիմար կլինեք, յեթե նման  
մի կուսակցության գործունեության ազատություն չը-  
տար: Յարիզմի համար դաշնակցությունը մի իսկական  
պատմական դուռ եր, պատմության կողմից նրան պար-  
զեած մի անգնահատելի ընծա: Յարեւան Ռուսաստանի  
տասնյակ ճնշված այլ ժողովուրդներ շարքերում անհա-  
րին և մի ուրիշ ազգային հակահեղափոխական կուսակ-  
ցություն մատնացուցց անել, վորը դաշնակցության չափ  
չնորհալի կերպով պաշտպանեք ցարի և արտաքին և ներ-  
քին քաղաքականությունը, վորը ձգտեք ցարական զոր-  
քերի առաջ Տաճկաստանի սահմանները բացել և միա-  
ժամանակ ծրագրեր մի միլիոն գյուղացի Տաճկահա-  
յաստան տեղափոխել և... նրանց հողերը ոռոսական կալ-  
վածատերերին ընծայել: Հենց այդ ճանապարհով և, վոր  
ցարի կառավարությունը ծրագրում եր լուծել հողային  
խնդիրը, սակայն նա դժբաղդություն ուներ Ռուսաստա-  
նի տասնյակ ճնշված փոքր ազգությունների շարքերում  
միայն մի հատիկ դաշնակցություն գտնել, մի կուսակ-  
ցություն՝ վորի ղեկավարներն իրենք ել չեն իմանում,  
թե ինչ են անում, և այնքան բարեսիրտ են, վոր ցարի  
կառավարությանը մի անգամից և ոռոսական Հայաս-  
տանն են ընծայում և Տաճկահայաստան:

Դաշնակցականների ձգտումներից ու ցանկություն-



ներից բոլորովին անկախ, պատմութիւնը նրանց վրին Յերեանյան Հայաստան փաթաթեց: Սակայն, նույն իսկ 1918 թ. հուլիսին, յերբ Յերեանյան Հայաստանը փառս եր, դաշնակցութեան ղեկավարներէից մեկը հրապարակութեան հայտարարում եր, վոր Հայաստանի ներկա տերիտորիայի վրա պետութիւն ստեղծելն իր կուսակցութիւնը յերբեք չի ձրադրել և վոր այդ ժամանակ կաղմակերպվող Հայաստանի հանրապետութիւնը դաշնակցութեան գործ չէ, այլ դրսից նրա վրին և փաթաթած: Այս հայտարարութեան հնաքափորութիւնը մի հին դաշնակցականի կողմից և նրա նպատակը հասկանալու համար անհրաժեշտ և նկատի առնել, վոր այդ ժամանակ Դենիկինը ձգտում եր վերականգնել կալվածատերերի և կապիտալիստների իշխանութիւնը և վոր Հայաստանի բանակի շտաբն ամբողջապէս Դենիկինի սպաների ձեռքում եր գտնվում: Ռուսաստանի յերեք հեղափոխութիւններէից հետո, ցարական իշխանութեան և Ռուսաստանի ամբողջ բուրժուաշխարհի իշխանութեան տապալումից հետո յել Ռուսաստանի հեղափոխութեան ազենաների ներկայութեամբ դաշնակցականները չեյին համարձակվում հայտարարել, վոր Ռուսաստանի նախկին տերիտորիայի վրա իրենք ընդունակ են պետութիւն կաղմակերպել:—Դաշնակցականներին իրենց ենք թողնում վորոշելու, թե այդ դեպքում ինչն եր ավելի մեծ դեր կատարում՝ ցարիզմի հմայքը թե՛ նրա ուրվականը:

Իրենց ղեկավարի այս հայտարարութիւնը դաշնակցականներն այսօր մոռացութեան են տվել: Յերեկվա պատմութիւնը չհիշելը շատ շահավետ և այն բոլոր կուսակցութիւններն ու կաղմակերպութիւններն համար, վորոնք այս աշխարհում վոչ մի սկզբունք չեն ճանաչում:

1918 թվին դաշնակցութիւնը պետական իշխանութեան գլուխ անցավ, սակայն իր իշխանութեան մոտ յեր-

կու և կես տարվա ընթացքում այնպես ել չկարողացավ բիշ թե շատ տանելի պետական ապարատ կաղմակերպել: Դաշնակցական Հայաստանի իսկական կառավարիչները խմբապետներն եյին, վորոնք շատ հաճախ վոչ կուսակցութիւն եյին ճանաչում և վոչ կառավարութիւն: Դաշնակցական Հայաստանն, որինակի համար, տրդարադատութեան և ղինվորական մինիստրութիւններ ուներ, սակայն խմբապետի բարձր ստաժ ունեցող ամեն մի դաշնակցական յերկրում իրեն ավելի ուժեղ եր զգում, քան այդ յերկու մինիստրութիւնները միասին վերցրած: Ճգնաժամային ամեն մի շրջանում, յերկրին սպառնացող վտանգի ամեն մի դեպքում հայրենիքի փրկիչներն դերն անսպասան խմբապետներն եյին ստանձնում: Իր սեփական ապարատին լիակատար հավատ ընծայել և նրա վրա հենվել դաշնակցական կառավարութիւնը չեր կարող: Դաշնակցական Հայաստանն անկախ պետութիւն չեր, բայց նրա առանձին գաղափարն ու շրջանները կենտրոնից կատարելապէս անկախ եյին: Որինականութեան մասին խոսք լինել չեր կարող: Դաշնակցական Հայաստանի հիմնական որենքը խմբապետի կամ մաուգերիստի կամքն ու կապրիզն եյին:—Այլ կերպ չեր կարող լինել մի յերկրում, վորի իշխող կառավարութիւնն առանձին կապիտալիստական յերկրների ձեռքում խաղալիք եր դարձել և մինչև իր պետական գոյութեան վերջին մոմենտն ել չկարողացավ իր քաղաքական գործունեութեան մի վորոշ գիծ ընդունել:

Դաշնակցական Հայաստանի ազատութեան կամ անկախութեան մասին խոսք լինել չի կարող: Աշխատավոր մասսաներն ստրկացած եյին տնեմոր դասակարգերի, խմբապետների, մաուգերիստների և առանձին դաշնակցականների ձեռքում: Վորտեղ խաղաղ ճանապարհով թալանել չեր կարելի, իսկույն հրապարակ եյին հանվում



մորակն ու մատուցելը: Ինչպես սուսներն են ասում՝ Не руглем, так ду́бем: Պետական իշխանությունը սեփականատեր և շահագործող դատակարարների ձեռքում եր կենտրոնացած՝ խմբավետների ղեկավարությունը, այնպես վոր բանվորի և գյուղացու ազատություն կամ անկախություն մասին խոսելն անվագն ծիծաղելի չէ: Իրենց հերթին, իշխողների փորձաթիվ խմբերը միջազգային կապիտալի թելադրանքով եյին դործում և աղատ ու անկախ եյին վոչ թե արտաքին աշխարհի հանդեպ, այլ միայն և միմիայն շահագործվող մասսաների հանդեպ: Դաշնակցական Հայաստանի անկախությունը և ազատությունը աշխատավոր լայն մասսաների համար կատարյալ ստրկացման եր հավասար: Այդ պատճառով ևլ միայն կապիտալիստական պետությունների ոգնությունը ե, վոր աշխատավոր ժողովրդից կարելի լեր պաշտպանել դաշնակցական պետություն այսպես կոչվող անկախությունը և ազատությունը:

Դաշնակցականների ներքին ու արտաքին քաղաքականություն այս պայմաններում շինարար աշխատանքն անհնարին եր, իսկ աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությունն՝ անթույլատրելի: Սակայն չպետք ե կարծել, վորպես թե դաշնակցականները և նրանց խմբավետները ձեռքերը ծալած նստած եյին: Նրանք որ ու գիշեր աշխատում եյին և պետք ե խոստովանվել, վոր նրանց աշխատանքը մեծ հաջողությամբ եր պատկվում, միայն թե իրենց յեռանդը շինարարության ստպարիզում դործադրելու փոխարեն՝ ամենայն բարեխղճությամբ այդ յեռանդը կործանման դործին եյին ծառայեցնում: Ծեծ, թալան, սպանություններ, հայ-թյուրքական կոտորածներ, նվաճողական քաղաքականություն՝ թշնամական վերաբերմունք դեպի բոլոր հարևան ժողովուրդները և այս բոլորից բղտող անտեսական անկում, բարքերի վայրենացում:

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ԹՈՂԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում խորհրդային իշխանությունը հաստատվեց մի շրջանում, յերբ յերկիրը անտեսապես ամբողջովին կործանված եր և չորս կողմից թշնամիներով շրջապատած, այնպես վոր դրսից ևլ վորեւե ոգնություն ստանալ չեր կարող: Հայտնի չե, վոր բարձր բերքի ապրիներն ել իր սեփական հացով մեր յերկիրը բավարարվել չի կարողանում, իսկ դաշնակցության իշխանության որով անդի տեսակետից Հայաստանն ամենավորդերդական պայմաններ եր ապրում: Բավական ե ասել, վոր 1914 թվի դեռության հետ համեմատած, 1919 թվին Հայաստանի բոլոր ցանքսերի տարածությունը նվազել եր յերեք քառորդով, իսկ տնային անասունների թիվը մոտ յերկու յերբորդով:

Դաշնակցական ռեժիմի շարունակությունը անտեսապես անհնարին եր, վորովհետեւ անտեսական փրկումը և համատարած քաղցը ժողովրդի ֆիզիքական դոյությունն անհնարին եյին դարձնում, իսկ ոգնության կաղմակերպումը դաշնակցության ուժերից վեր մի դործ եր: Ինչքան շինարարության ստպարիզում դաշնակցությունն ապիկար ու անշնորհ եր, այնքան ել բոլոր հարևաններին հայ ժողովրդին թշնամացնելու դործում նա ավելի տաղանդավոր եր: Յեւլ այդ կործանիչ քաղաքականության հետևանքն այն յեղավ, վոր 1920 թ. աշնանը Հայաստանը վոչ մի բարեկամ չուներ: Անհնարին եր դարձել նույն իսկ յերկրից հեռանալը, վորովհետեւ բոլոր հարևան յերկրները տանող դռները դաշնակցության առաջ փակվել եյին: 1920 թ. աշնանը դաշնակցական Հայաստանը պատերազմական դերիների մի լադեր եր ներկայացնում:



Տնտեսական փուլումը նման պայմաններում անխուսափելի չէր: Դիմենք թվերի լեզվին: Հայաստանի բոլոր ցանքերը և առանձին կուլտուրաները 1914 և 1919 թ. թ. հետևյալ տարածությունն էին բռնում (դեպատիններով).

|                                         | 1914 թ. | 1919 թ. | 1919 թ. 9/10-ը 1914 թ. վերաբերմամբ |
|-----------------------------------------|---------|---------|------------------------------------|
| Բոլոր տեսակի ցանքեր . . . . .           | 276.957 | 75.714  | 27,3                               |
| Հացարույսեր . . . . .                   | 147.766 | 71.778  | 29,0                               |
| Տեխնիք. բույսեր, դլլա. բամբակ . . . . . | 10.736  | 584     | 5,4                                |
| Գետնախնձոր . . . . .                    | 6.392   | 1.691   | 26,5                               |
| Յուղաբեր բույսեր . . . . .              | 4.614   | 858     | 18,6                               |
| Բանջարանոցն. և բոստաններ . . . . .      | 3.445   | 628     | 18,2                               |
| Ցանովի խոտ . . . . .                    | 4.004   | 175     | 4,4                                |

Ավելի ծանր տնտեսական փուլում դժվար է յերեվակայել: Հայաստանը կորստյան անդունդի առաջ էր կանգնած: Հողագործության առաքարիդում նա վոչ միայն չէր առաջադիմում, այլ դեռ կորցրել էր հարստության յերեք քառորդը—72,7 տոկոսը: 1914 թ. դրության հետ համեմատած, 1919 թվին ցանքերի ընդհանուր տարածությունը միայն 27,3 տոկոս էր կազմում:

Անասնապահության ծանր վիճակը ժողովրդի համար վոչ պակաս վողբերգական դրություն էր ստեղծել: Կերի պակասը և ժողովրդական մաստանների քաղցն այն հետեվանքն ունեցան, վոր անասուններին անխնայաբար մորթում էին՝ նրանց քաղցից փրկելու և իրենց սեփական քաղցը հագեցնելու համար: Վորոշ շրջաններում հացի զինն ավելի բարձր էր, քան մսի զինը: Անասնապահության վիճակին վեվաբերյալ հետևյալ թվական տվյալներն ենք առաջ բերում.

|                                  | 1914 թ.   | 1919 թ. | 1919 թ. 9/10-ը 1914 թ. վերաբերմամբ |
|----------------------------------|-----------|---------|------------------------------------|
| Անասունն. ընդհան. թիվը . . . . . | 2.364.733 | 743.643 | 31,6                               |
| Բոլոր յեղջ. անասուններ . . . . . | 688.594   | 229.512 | 33,6                               |
| Զի . . . . .                     | 51.464    | 19.862  | 38,6                               |
| Վոշխար . . . . .                 | 1.378.590 | 405.721 | 39,0                               |
| Այծ . . . . .                    | 186.003   | 65.183  | 35,3                               |
| Խոզ . . . . .                    | 23.623    | 5.607   | 23,7                               |

1914 թվի իր անասուններից Հայաստանի գյուղացին 1919 թ. միայն մի յերրորդն էր պահպանել: Անասունների 68,4 տոկոսը կորստվել էր: Անասնապահության անկումը գյուղացու համար շատ ավելի ծանր հետևանքներ ունեցավ, քան հողագործության անկումը, վորովհետև նրա վերականգնումը յերկար ժամանակ է պահանջում: Հողագործության վերականգնման դանդաղ ընթացքը հետագա տարիներին ամենամեծ չափով նրանով է պայմանավորվում, վոր գյուղացիության մի խոշոր տոկոսը բանվոր անասուն չունի:

Այդ նույն ժամանակաշրջանում, 1914—1919 թ. թ. ընթացքում, գյուղացիությունը զրկվել էր նույն իր արտադրության հիմնական գործիքների մոտ յերեք քառորդից: Դեռ մինչ պատերազմը, Հայաստանի գյուղացին գյուղատնտեսական շատ քիչ գործիք ուներ, իսկ 1914—1919 թ. թ. ընթացքում նա զրկվեց նույն իսկ այդ քիչ յերեք քառորդից: Այդ մասին թվական տվյալները մեղ հետեվյալն են առում.

|                  | 1914 թ. | 1919 թ. | նվազում բոտ տոկոսի |
|------------------|---------|---------|--------------------|
| Գութան . . . . . | 17.585  | 5.293   | 70                 |
| Արոր . . . . .   | 99.887  | 22.314  | 78                 |

Այստեղից պարզ է, վոր խորհրդայնացումից հետո յեղ Հայաստանի գյուղատնտեսությունն արագ քայլերով



վերականգնել չեն կարող, քանի վոր գյուղացին գրկվել էր բանվոր անասունների և գութանների 70 տոկոսից և արօրների 78 տոկոսից:

Գյուղացուն այս ծանր կացութիւնը գյուղական բռունցքների և քաղաքի առևտրականների համար հարբստացման մի անսպաս աղբյուր դարձավ: Դառնալով գյուղացին իր քաղցած անասուններին անվերջ վաճառում էր, նորմալ ժամանակի դներին հագելով 30 — 40 տոկոսն ստանալով: Իսկ կառավարութիւնը մասամբ չեն խփում՝ կործանվող գյուղացիութեանը վորեն ոգնութիւն հասցնելու և նրա թալանը սպեկուլյանտների կողմից կանգնեցնելու կամ մեղմացնելու համար:

Ինչ վերաբերում է դործարանային և լեռնային արդունաբերութեանը, դաշնակցական Հայաստանում վերջինս իսպառ գոյութիւն չունի: Հանքերում ու դործարաններում աշխատանքը կատարելապես դադարել էր:

### 1920 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԿԵՂԱՅՐԱՌԻՄԸ

Հայաստանը կործանվում էր, չնայած նրան, վոր ազգային կուսակցութիւնները և դաշնակցական կառավարութիւնը նրան անվերջ «փրկում էին», չնայած և այն «հովանավորութեանը», վոր ցույց էին տալիս կապիտալիստական պետութիւնները: Արդեն 1920 թ. մայիսին տեղի ունեցած բանվորական հակալատարական ցույցերը և Լենինականի բանվորութեան ապստամբութիւնը ցույց էին տալիս, վոր «հեղափոխական» և «սոցիալիստական» իշխանութեան որերը հաշվված են: Անսահման մեծ էր և գյուղացիութեան զգոհութիւնը կառավարութիւնից, սակայն նրա քաղաքական հետաձուգութիւնը և անկազմակերպ վիճակն՝ ապստամբութիւնը նրա շարքերում անհնարին էին դարձնում և գրանով հե-

տաճգում դաշնակցական կառավարութեան անկման մոմենտը: Խորհրդային կարգերի հաստատումն Ադրբեջանում և Լենինականի գրավումը տաճկական զորքերի կողմից հարցի լուծումը և՛ արագացրին և՛ հեշտացրին: Հայաստանի աշխատավոր մասսաների առաջ պատմութիւնը հրամայողաբար հարց էր դրել՝ կործանվել կամ հեղափոխական կռիւի ճանապարհով իր ազատագրումը նվաճել: Սակայն Հայաստանի բանվորի ու գյուղացու համար ապստամբութիւնը նշանակում էր կռիւ վոչ միայն դաշնակցական, այլ և միջազգային իմպերիալիստական ուժերի դեմ: Անհրաժեշտ էր հեղափոխական դաշնակիցներ փնտրել: Յեւ մեր աշխատավոր մասսաների բախտն էր, վոր այդ ժամանակ Ադրբեջանում արդեն խորհրդային կարգեր էին հաստատված: Կարմիր Բանակի ազատագրական զորոշի տակ և նրա ոգնութեամբ Հայաստանի ապստամբած բանվորն ու գյուղացին յերկրում իրենց իշխանութիւնն են հիմնում և առաջին անգամ պատմութեան մեջ իրենց ազատագրական կռիւը հետևողական դասակարգային հողի վրա յեն գնում և պրոլետարիատի միջազգային ազատագրական շարժմանը միանում: Դաշնակցականների և այլ հակահեղափոխական կուսակցութիւնների հակախորհրդային ագիտացիայի հիմնական գենքներից մեկն այն է, վոր նոյեմբերի 29-ի հեղաշրջումը առանց Կարմիր Բանակի ոգնութեան անհնարին էր: Հայաստանի բանվորն ու գյուղացին այդ հանգամանքը վոչ թե թաղցնում են, այլ իրենց պարծանքի առարկա յեն համարում: Միջազգային հակահեղափոխութեանը դիմադրել և նրան ջախջախել միայն միջազգային հողի վրա դրած հեղափոխութիւնը կարող է: Պարզ է, վոր փոքրիկ Հայաստանի բանվորն ու գյուղացին ընդունակ էին տալալել դաշնակցութեան լուծը, սակայն հարցը վերաբերում էր վոչ թե դաշնակցութեանը, այլ այն ամբողջ հա-



կահեղափոխական իմպերիալիստական բանակին, վորը ձգտում էր կործանել խորհրդային իշխանությունը և ծրագրում Հայաստանը իր հարձակումների բազա դարձնել, վորտեղից նա պետք է հարվածեր Ադրբեջանի ու Ռուսաստանի խորհրդային իշխանությունը, և խորհրդային կարգերը տապալելուց հետո խեղդեր հեղափոխական շարժումն ամբողջ աշխարհում — կապիտալիստական յերկրներում և նրանց գաղութներում: Միջազգային բուրժուազիան հանդուրժում էր գաղնակցական կառավարությունների գոյությունը, ինչքան վոր վերջինս նրա հակահեղափոխական ծրագրերի իրականացման կույր գործիք էր հանդիսանում: Առանց կարմիր Բանակի սգնություն Հայաստանի ազատագրումը գաղնակցություն և միջազգային բուրժուազիայի լծից անհնարին կլիներ: Կապիտալ խորհրդային իշխանություն հետ և կոմունիստական կուսակցություն ղեկավարությունն ընդունելով, Հայաստանի բանվորն ու գյուղացին վոչ միայն իրենց իշխանությունն ստեղծեցին, այլ և խորհրդային նոր պետության գոյությունն ու բարգավաճումն ապահովեցին, նրա անտեսական ու կուլտուրական դարգացման ամենամեծ շտաբաշխին ստացան: Նոյեմբերի 29-ի հեղափոխական ակտով նրանք ազատագրվեցին վոչ միայն մեր յերկրի շահագործող գաղապարգերի իշխանությունից, այլ և առհասարակ բուրժուազիայի իշխանությունից, միջազգային կապիտալի շահագործումից: Ազատությունը մենք հասկանում ենք միայն վորպես ազատություն անտեսական ու քաղաքական շահագործումից, իսկ նման ազատությանն անհասկանալի հնարավոր է այն դեպքում միայն, յերբ կապված ենք պրոլետարիատի միջազգային ազատագրական շարժման հետ: Դրանով բանվորն ու գյուղացին վոչ միայն սեփական իշխանություն են հիմնում, այլ և սոցիալիստական կարգեր հաստատելու հնարավորություն

1003  
23835-60  
1088

են ստեղծում: Նոյեմբերի 29-ի հեղաշրջումն ամենահեռուն գնացող միջազգային արմատներ ունի, աշխատավոր գաղապարգերի հեղաշրջում է, կատարած հանուն սոցիալիզմի, հանուն շահագործման բոլոր յեղանակների վերացման:

Մինչև 1920 թ. 29-ն նոյեմբերի Հայաստանի աշխատավոր մասնաներն ստրկացած էյին ներքին ու արտաքին հակահեղափոխական ուժերի ձեռքում: Յերկրի վորդությունն ազգային կուսակցությունները նրանում էյին տեսնում, վոր այս կամ այն կապիտալիստական պետությունը համաձայնի հովանավորել թույլ ու խղճուկ դաշնակցական Հայաստանին: Բանվորագյուղացիական մասնաները վորբերի դրություն մեջ էյին գրվում, կատարելապես անոգնական հայտարարվում: Իրենց գոյության այդ խայտառակ պայմաններից է, վոր նոյեմբերի 29-ին մեր բանվորն ու գյուղացին ազատվեցին և իրենց վիճակը Հոկտեմբերյան Հեղափոխության վիճակի հետ կապելով, վորբերի խորհրդային Հայաստանն աշխարհիս ամենագորեղ կապիտալիստական պետությունների հանդեպ անխոցելի դարձրին: Հարձակվել խորհրդային Հայաստանի բանվորի և գյուղացու վրա՝ նշանակում է հարձակվել ամբողջ խորհրդային Միության վրա: Իր գոյության ներքին ու արտաքին ամեն մի ծանր մոմենտին մեր աշխատավորությունը հնարավորություն ունի հենվելու վոչ միայն խորհրդային Միության, այլ և ամբողջ աշխարհի բանվորության և գյուղացիության վրա, միջազգային ամբողջ ազատագրական շարժման վրա:

Անա այն անկախությունը և ազատությունը, վոր Հայաստանի աշխատավոր մասնաները նվաճեցին 1920 թ. նոյեմբերի 29-ին:





**ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԲԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱ-  
ՑԻՈՒԹՅՈՒՆ**

Պորհրդային իշխանութիւնը բանվորներին և աշխատա-  
վոր գյուղացիներին իշխանութիւնն է: Նրա ուժեղացումն  
ու բարգաւաճումն անբողջապէս նրանից են կախված, թե  
լայն աշխատավորական մասսաներն ինչպէս են կազմա-  
կերպում իրենց խորհուրդներն ու գործադիր մարմինները:  
Ինչպէս են կազմակերպում իրենց բոլոր հեղափոխական  
մարմինները և նրանց աշխատանքին ինչ մասնակցութիւն  
են ցուցադրում: Պորհրդային պետութեան ապագայում  
այնպէս և կազմակերպված, վոր թե նրա կռիվը հակա-  
հեղափոխական ուժերի դեմ և թե նրա շինարար աշխա-  
տանքը, բանվորներին և գյուղացիներին լայն հեղափոխա-  
կան կազմակերպութիւններ են յենթադրում, վորոնց  
ձեռքում է կենտրոնացած պետութեան ամբողջ վիճակը:  
Պորհրդային իշխանութեան առաջ դրած խնդիրներն այն-  
քան մեծ ու գծվար լուծելի չեն, վոր բոլորակրատական  
կառավարութեան մասին մեզ մօտ խոսք լինել չի կարող:  
Այդ պատճառով եւ խորհրդային իշխանութեան հիմնական  
հոգսերից ու խնդիրներից մեկն է՝ աշխատավոր մասսա-  
ների կազմակերպմանը զարկ տալ, նրանց դիտակցու-  
թիւնը բարձրացնել, նրանց քաղաքականապէս կրթել,  
պետական շինարարութեան գործին ընդունակ դարձնել:  
Հայաստանի անկազմակերպ մասսաների շարքերում չորս  
տարվա ընթացքում այդ տեսակետից ամենախոշոր վո-  
ւորիսումներ, իսկական հրաշքներ են կատարվել: Արդեն  
կազմակերպված և բանվորների և պաշտոնյաների 95  
տոկոսը: Մեր արհեստակցական միութիւնները խորհրդա-  
յին իշխանութեան հետ ձևաք-ձեռքի տված ամեն կերպ  
նպաստում են յերկրի շինարարութեանը, բարձրացնում  
նրա անսկսութիւնն ու մտավոր զարգացման մակար-

դակը: Գյուղացիական ամենալայն մասսաները կազմակեր-  
պված են իրենց խորհուրդների և գյուղատնտեսականների  
շուրջը: Բավական և ասել, վոր վերջիններս ընդգրկում են  
աշխատավոր գյուղացիութեան 75 տոկոսը: Կազմակեր-  
պվել և գյուղացիութեան և՛ այն խավը, վորին ազգային  
կուսակցութիւնները չենք ել նկատում—գյուղատնտեսա-  
կան բանվորները: Հողանտառ միութիւնը հաջողվել է  
արդեն 9,000 բաւարակ կազմակերպել: Հասակավոր աշխա-  
տավորների կազմակերպմանը ցուզընթացաբար նույն  
պրոցեսը և յերիտասարդութեան շարքերում և կատար-  
վում: Հայաստանի բանվորն ու գյուղացին ամենայն  
իրավունքով կարող են պարծենալ նրանով, վոր այսքան  
կարճ ժամանակաշրջանում մեր յերիտասարդութիւնն ու  
պատանեկութիւնն իրենց դասակարգային ուժեղ կազ-  
մակերպութիւններն են ստեղծել և կոմունիզմի հաղթա-  
նակի համար պահանջվող նոր դնդեր են կրթում ու պատ-  
րաստում: Մեր յերիտասարդ սերունդը բաղդավոր ենրանով,  
վոր կազմակերպվելու, քաղաքականապէս կրթվելու և պրոլե-  
տարիատի միջազգային ազատագրական շարժմանը մասնակ-  
ցելու լիակատար հնարավորութիւն ունի: Պորհրդային  
իշխանութեան պայմաններում կազմակերպվելու, քաղա-  
քականապէս ու մտավորապէս առաջադիմելու, հասարա-  
կական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելու, իր  
ընդունակութիւններն ու ուժերը լիովին ոգտագործելու  
ամենալայն հնարավորութիւններ ունի և ամենամեծ ա-  
զատութիւններով և ոգովում ամեն մի քաղաքացի, ով  
կազմակերպվում, աշխատում ու կռւում է հանուն հեղա-  
փոխութեան հաղթանակի, հանուն աշխատավոր մասսա-  
ների անտեսական ու կուլտուրական մակարդակի բար-  
ձրացման, հանուն մեր միջազգային կռաւրի ուժեղաց-  
ման: Մահմանափակումներն այդ ապարեզում գոյութիւն  
ունեն այն քաղաքացիների համար, վորոնք հակահեղա-



փոխական աշխատանք են վարում, փոքր պատմությունն անիմա առաջ տանելու փոխարեն հետ են տանում և յերկիրը նորից 1920 թ. վողբերգական վիճակին արժանացնելու հակահեղափոխական ծրագրներով ու իլյուզիաներով են սնվում:

Հայաստանի կազմակերպված բանվորն ու գյուղացին ստեղծեցին և իրենց հեղափոխական նվաճումների պաշտպան կարմիր բանակը: Խորհրդային Միության կարմիր բանակի այդ անբաժանելի մասը և մեր հեղափոխական կազմակերպությունների պարժանքը: Մեր բանակը բանվորների և աշխատավոր գյուղացիների բանակ է թե իր կազմով և թե իր գոյության նպատակներով, իր առաջ դրած խնդիրներով: Նա կարմիր, այսինքն հեղափոխական բանակ է, կոչված պաշտպանելու բանվորի և գյուղացու սեփականությունը, նրանց խորհուրդները, նրանց կազմակերպությունները, նրանց շինարար աշխատանքը, նրանց հեղափոխական նվաճումները: Բանվորների և գյուղացիների դեմ չե, վոր նա ուղղում է իր սվինները, ինչպես այդ բուրժուական յերկրներում տեղի ունի: Նրա զենքը միայն և միմիայն շահագործող դասակարգերի, հակահեղափոխական ուժերի համար գոյություն ունի: Մեր կարմիր բանակը բանվորների և աշխատավոր գյուղացիների շարքերից դուրս չեկած, նրանց քաղաքական ու արհեստակցական կազմակերպությունների հետ հաղարավոր յեղբայրական թևերով կապված մի բանակ է, վորի շարքերում իշխող դասակարգերի և հակահեղափոխական խավերի ներկայացուցիչները տեղ չունեն: Կարմիր բանակը մեր հեղափոխական կազմակերպություններից մեկն է:

Հակառակ դաշնակցականների հավաստիացումներին, այս հինգ տարվա ընթացքում Հայաստանում բանվորն ու գյուղացին ստեղծեցին և մի գորեղ կոմունիստական կուսակցություն, վորի ղեկավարությունը են գործում մեր

բոլոր խորհրդային, արհեստակցական, բանվորական ու գյուղացիական, յերիտասարդական ու պիոներական կազմակերպությունները: Դաշնակցականները ճգնում էին համոզել ամբողջ աշխարհը նրանում, վոր հայ ժողովուրդը կոմունիզմի հետ վոչ մի առնչություն չունի, վոր նա դաշնակցական է և դաշնակցության հետ ապրելու, նրա հետ ել մեռնելու յե: Քաղաքականապես ու բարոյապես դիակացած դաշնակցությանը Հայաստանի բանվորն ու գյուղացին գերադասեցին կոմունիստական կուսակցությունը, վորին անդամակցելը և վորի շարքերում աշխատելն ու կռվելը Հայաստանի ամեն մի զիտակից հեղափոխական աշխատավորն իր բարձրագույն բախտն է համարում:

Խորհրդային կարգերի, այն է բանվորների և գյուղացիների իշխանության հաստատումը, և աշխատավոր լայն մասսաների կազմակերպումը խորհրդային ու կոմունիստական դրոշակի շուրջը նոյեբերմի 29-ի հեղաշրջման ամենահիմնական, ամենակարեւոր արդյունքներն են և միաժամանակ գլխավոր նախապայմաններն այն մեծ հաղթանակների, վոր իր շինարար աշխատանքի ասպարիզում տարավ ու տանում է խորհրդային իշխանությունը: Աշխատավոր լայն մասսաների վրա հենվելով, նրանց աջակցությունից ոգտվելով և նրանց իր շինարար աշխատանքին ամեն կերպ մասնակից անելով է, վոր ընդամենը 5 տարվա ընթացքում խորհրդային իշխանությունը կարողացավ վերացնել քաղցն ու տարափոխիկ հիվանդությունները, անարխիան ու ավազակությունը, յերկրի տնտեսական ու կուլտուրական մակարդակը նշանավոր չափերով բարձրացրեց, յերկրում կատարյալ խաղաղություն հաստատեց և հարեան պետությունների հետ բարեկամական հարաբերությունների մեջ մտավ:

Կազմակերպված ու զիտակից մասսաները խորհրդա-



յին իշխանության հիմքը և նրա բոլոր նվաճումների գլխավոր զբաղակարանն են: Այսօր, Հայաստանի խորհրդայնացման 5-րդ տարեգարծի օրը, մեր բանվորն ու գյուղացին հպարտանալու և պարծենալու շատ ու շատ հիմք ունեն, բայց իրենց և վոչ մի նվաճումով նրանք այնքան հպարտանալ չեն կարող, ինչքան այդ իրենց մասնաշաղկան կազմակերպությունների մասին կարելի չէ ասել: Այստեղ բավական է արձանագրել, վեր քաղաքական ու հասարակական կյանքից հեռու կանգնած, Ռուսաստանի հեղափոխական շաժուկներին չմասնակցած, յերկրի շինարարության ղեկն ամբողջապես շահագործող դասակարգերի ձեռքը հանձնած բանվորներն ու գյուղացիները հինգ տարվա ընթացքում բառիս բուն իմաստով վերածնվեցին, քաղաքական հեղաշրջմանը գուճընթացաբար իրենք ել հողեպես ու բարոյապես հեղաշրջվեցին և մասնաշաղկան կազմակերպություններ ստեղծեցին, վորոնց շուրջը հավաքված և վորոնց ղեկավարութամբ մեր յերկրի տնտեսական ու կուլտուրական շինարարության գործին նրանք ամենաակտիվ մասնակցություն են ցուցադրում և սեփական ձեռքերով իրենց գեղեցիկ ապագայի գեղքն են կըռում-կոփում:

Ով ուզում է իմանալ, թե ինչ է խորհրդային իշխանությունը, թող ծանոթանա հետևյալ տվյալներին: Հայաստանի իշխանությունը 800 խորհրդի ձեռքում է, վորոնք կառավարում են յերկիրը վոչ թե բյուրոկրատիայի, այլ իրենց 15.000 (տասն և հինգ հազար) անդամների միջոցով և իրենց ժողովներում ու համագումարներում ընտրված առաջին ու կենտրոնական գործադիր մարմինների միջոցով, վորոնցից 9 զավգործկումը 171 անգամ ունեն և 35 շրջգործկումը — 247 անգամ: Հայաստանի արհեստակցական միություններն իրենց շուրջն են հավաքել յերկրի բանվորների և ծառայողների 93 տոկոսը — մոտ 32,000

(յերեսուն և յերկու հազար) մարդ: Այստեղ ել աշխատանքի ամբողջ ծանրությունը ընտրովի մարմինների վրա չէ բեկնում, վորոնց անդամների թիվը 1.800-ից անցնում և (վարչություններ, տեղեկություն գործարկումներ): 16.000 (տասն և վեց հազար) մարդ լենինյան կոմյերիտ-միություն շարքերում է կազմակերպված — յերիտմիութենական կարմիր զինվորներին հաշվի չառած, քսան հազար (20.000) մարդ — պիոներական կազմակերպություններում 5.000 հոգի ծաղիկների կազմակերպություններում, հինգ հազարի յե հասնում կին պատգամավորների թիվը, 40.000 (քառասուն հազար) քաղաքացի ազատական կոոպերացիային և մոտ քսան հազար (20.000) տնտեսություն գյուղատնտեսական կոոպերացիային և անդամակցում, ավելի քան տաս հազար (10.000) հոգի ֆիզկուլտուրայի շուրջն և կազմակերպված — չհաշված կարմիր բանակը և աշակերտությունը. վերջերս սկսել են կազմակերպվել տնայնագործները և վերջապես 6.600 (վեց հազար վեց հարյուր) հոգի այն կուսակցության շարքերում են գտնվում, աշխատում ու պայքարում, վորը մեր ամբողջ հեղափոխական շարժման, տնտեսական ու կուլտուրական շինարարության ղեկավարը և աշխատավոր մասնանների կազմակերպիչն է: Հայաստանի նման փոքրիկ, տնտեսապես ու կուլտուրապես հետամնաց յերկրում, վորտեղ աշխատավոր մասնանները նոր միայն սկսել են կազմակերպվել, կոմկուսի շարքերում 6.600 մարդ ունենալն ամենախոշոր պատմական նվաճումը պետք է համարել:

Ահա կազմակերպված այս մասնանների վրա հենվելով ու նրանց աջակցությամբ, նրանց ակտիվ մասնակցությամբ է, վոր խորհրդային իշխանությունը առաջ և տանում իր շինարարական աշխատանքը կյանքի բոլոր ասպարեզներում:



Այժմ տեսնենք, թե բանվորների և գյուղացիների իշխանութիւնը հինգ տարվա ընթացքում յերկրի տնտեսական ու կուլտուրական կյանքում ինչ փոփոխումներ եմտցրել:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԷ

Ինչպես վերել տեսանք, իր խորհրդայնացման մոմենտին Հայաստանը վոչ միայն տնտեսական ծանր պայմաններ եր ապրում, այլ տնտեսապես կործանվում եր, մասնայական քաղցի զոհ եր գնում: Վորպես գերազանցորեն գյուղատնտեսական մի յերկիր, վորի բնակչության գոյութիւնը զխաւորապես հողագործության և անասնապահության արդիւնքներով ե ապահովվում, իր տնտեսութիւնը վերականգնելու և ժողովրդի լայն մասսաները աննդով ապահովելու համար խորհրդային Հայաստանն առաջին հերթին իր գյուղատնտեսության վերականգնման գործին պետք եր ձեռնարկեր: Մակայն, հենց 1921 թվին այդ ասպարիզում շոշափելի հետեւանքների հասնելն անհնարին եր: Փետրվար-մարտ ամիսների հաւկահեղափոխական շարժումը և Զանգեզուրի ավանայութան խորհրդային իշխանությանը խանգարեցին 1921 թ. գարնանացանի կամպանիան կազմակերպել: Դրանից անկախ, գյուղացիության մի խոշոր տոկոսն անմիջապես արտադրական աշխատանքի գեմել չեր կարող, քանի վոր զուրկ եր թե բանվոր անասուններից և թե գյուղատնտեսական գործիքներից ու սերմացուից: 1921 թ. խորհրդային իշխանության առաջ իր ամբողջ մեծությամբ ծառացած եր մասնայական քաղցի վերացման և չքավոր գյուղացիությանը լծկան անասուններ ու արտադրության գործիքներ մատակարարելու խնդիրը, մի խնդիր, վորի լուծման համար յերկրի սահմաններում վոչ մի միջոց չկար:

Հայաստանի աշխատավոր մասսաների բաղին եր, վոր նրանց վիճակված ուղ վողբերգական մոմենտին Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը ներքին ու արտաքին թշնամու հանդեպ կատարյալ հաղթանակ եր տարել և վոր մեր հարեւան յերկու յերկրում ել՝ Վրաստանում և Ադրբեջանում այդ ժամանակ արդեն խորհրդային կարգեր եյին հաստատվել: Չնայած նրան, վոր պատերազմից ու քաղաքացիական կռիւներից հետո Ռուսաստանը, մասամբ նայել Ադրբեջանն ու Վրաստանը տնտեսական ծանր պայմաններ եյին ապրում, այդ յերկրների բանվորներն ու գյուղացիներն իրենց սուղ միջոցներից խորհրդային Հայաստանին այնքան մեծ ոգնութիւն ցույց տվին, վոր մեր խորհրդային իշխանության համար հնարավոր դարձավ վոչ միայն մասնայական քաղցը վերացնել, այլ և 1921—22 գյուղատնտեսական տարվա համար պատրաստութիւններ տեսնել: Յեղբայրական ոգնության այդ մեծ որինակը բոլորի հիշողության մեջ գեռ թարմ ե: 1921 թ. Հայաստանի խորհրդային իշխանութիւնը խորհրդային Ռուսաստանից, մասամբ նայել խորհրդային Ադրբեջանից ու Վրաստանից, մի քանի հարյուր հազար փութ հաց, մի քանի տասնյակ վագոն ձուկ, մի քանի միլիոն արշին կտորեղեն, մի քանի տասնյակ ցիտերն նավթ, աղ և այլ մթերք ստացավ: Չափազանց մեծ եր և այն դրամական ոգնութիւնը, վոր մատուցեց մեզ խորհրդային Ռուսաստանը: Անհրաժեշտ ե նայել հիշատակել, վոր նույն 1921 թ. Մոսկվայից մի քանի տասնյակ հազար կտոր հայերեն ու ռուսերեն չրքեր են ստացվել:

Յեղբայրական ոգնության նման ձեւը — առանց վորյեվե պայմանի — միայն բանվորների ու գյուղացիների, միայն խորհրդային կառավարութիւնների ու յերկրների մեջ ե հնարավոր: Առանց այդ առատ ոգնության ան-



հնարին կլինեն չեթե մեր անտեսությունը վերականգնել, այլ նույնիսկ քաղցի սարսափները վերացնել: 1922 թվին ել պարենավորման գործը խորհրդային իշխանությունից ահազին յեռանդ է խլում, նրանից ահագին միջոցներ է պահանջում: Հասկանալի պատճառներով, այդ թվին ել հողագործության և անասնապահության վիճակը դեռ շատ ծանր էր: Յեւ միայն 1922-23 գյուղատնտեսական տարուց է, վոր նշանավոր չափով վերականգնում են թե հողագործությունը և թե անասնապահությունը:

Վերել տեսանք արդեն, վոր 1914 թվի դրության հետ համեմատած, 1919 թվին բոլոր ցանքերի տարածությունը նվազել էր մոտ չորս անգամ, իսկ անասունների թիվը մոտ յերեք անգամ, 100 տոկոսից իջնելով մինչև 27,32 ցանքերի համար և մինչև 31,60% անասունների համար: Խորհրդային իշխանության պայմաններում տեղի ունեցած վերելքի մեծության մասին պարզ գաղափար կազմելու համար անհրաժեշտ է նկատի առնել, վոր Հայաստանի խորհրդայնացման մոմենտին յերկրի անտեսությունը վոչ միայն կործանված էր, այլ և զուրկ էր վերականգման միջոցներից—գործիքներից, անասուններից և սերմացուից: 1919-1925 թ.թ. ժամանակաշրջանի համար մեր անտեսության այդ յերկու կարեւորագույն ճյուղերի վերելքը հետևյալ պատկերն է ներկայացնում.

|                                                    | 1919   | 1923    | 1925    | 1925 թ. 1914 թ. վերաբերմ. |
|----------------------------------------------------|--------|---------|---------|---------------------------|
| Ցանքերի ընդհանուր տարածություն (դե-սյատին) . . . . | 75.714 | 194.969 | 236.720 | — 85,1%                   |
| Հացարույսեր . . . .                                | 71.778 | 174.353 | 200.139 | — 80,8 »                  |

|                                               |       |         |          |           |
|-----------------------------------------------|-------|---------|----------|-----------|
| Տեխնիք. բույսեր, գլխավորապես բամբակ . . . . . | 584   | — 4.414 | — 14.204 | — 132,3 » |
| Գետնախնձոր . . . .                            | 1.691 | — 6.484 | — 8.869  | — 138,8 » |
| Յուղաբեր բույսեր . . . .                      | 858   | — 5.190 | — 6.635  | — 143,8 » |
| Բանջարանոց յեւ բոստան . . . . .               | 628   | — 2.278 | — 4.587  | — 131,1 » |
| Ցանտփի խոտ . . . .                            | 175   | — 2.250 | — 2.386  | — 57,1 »  |

Ինչպես տեսնում ենք, 1914 թ. դրությանն ընդհանուր առմամբ, դեռ չենք հասել, սակայն 27,3 տոկոսից 1919 թ. ցանքերի տարածությունը բարձրացել է մինչև 85,1 տոկոս, «յսինքն» ուղիղ յերեք անգամ, իսկ սուսնձին վերցրած՝ բամբակի ցանքերի տարածությունն աճել է 24 անգամ, գետնախնձորին—5 անգամ, յուղաբեր բույսերին—մոտ 8 անգամ և բանջարանոցների ու բոստանների տարածությունը—7 անգամ: 1914 թ. դրության հետ համեմատած, ամենացած տոկոսը ցանովի խոտն է տալիս, թեև 1919 թ. դրության հետ համեմատած, այս ասպարիզում ուժեղ վերելք է կատարվել (աճում 13 անգամ): Ինչ վերաբերում է սոյուսակի 3, 4, 5 և 6-րդ հորիզոնական դժերում մասնացույց արած բույսերին, 1925 թվին նրանց կուլտուրան 31,1 տոկոսից մինչև 43,8 տոկոս գերազանցում է 1914 թ. դրությանը: Այստեղ յերկրի ընդհանուր տնտեսական վերելքի լավագույն ասպարիզներից մեկն է տեսնելու: Գյուղատնտեսությունն աճում է վոչ միայն քանակով, այլ և վորակով: Գյուղացին տեխնիքական բույսերի մշակույթին է անցնում, մի հանգամանք, վոր մեր գործարանային արդյունաբերությունն ընդլայնելու հնարավորություն է տալիս և ինքն այդ արդյունաբերության գոյության նշան է:

Վերև բերված թվական տվյալներն ամբողջ յերկրին են վերաբերում: Սակայն պետք է նկատի առնել, վոր



մեր գավառներից չսրսում արդեն 1925 թ. ցանքսի ընդհանուր տարածությունը գերազանցում է 1914 թ. տարածությանը (Յերևանի գավառ—8 տոկոսով, Գիւլիստանի—12, Զանգեզուրի—19 և Մեղրիի գավառակ—5 տոկոսով)։

Գյուղատնտեսության վերելքի պատկերը լրիվ չի լինի, յեթե ցանքսերի տարածության խնդիրը բնակչության հետ չառնենք նաև բնակչության թիվը համապատասխան տարում։ Այդ տեսակետից խնդրին մոտենալով, գտնում ենք, Վոր բնակչության ամեն մի հազար շնչին 1914 թ. 302 դեպյատին ցանքս էր ընկնում, 1919 թվին —91 դեպյատին և 1925 թ.—284 դեպյատին։

Կարևոր է նաև նկատի առնել, Վոր ցանքս չունեցող գյուղացիական տնտեսությունների տոկոսը 1923 թ. 18-ի յեր հասնում, իսկ ներկա 1925 թ. այդ տոկոսն իջել է մինչև 15,26, իջել է նաև մինչև մի դեպյատին ցանքս ունեցողների տոկոսը՝ 50,34-ից 1923 թվին մինչև 39,21 ներկա 1925 թվին։ Իսկ մի դեպյատինից ավելի ցանքս անող բոլոր տնտեսությունների տոկոսը 1923-ից հետո անդադար աճում է։ Խնդրի այդ կողմը պարզելու համար հետևյալ աղյուսակն ենք առաջ բերում։ Խորհրդային Հայաստանի գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվում տնտեսությունների զանազան կատեգորիաները, բաժանած ըստ ցանքսի տարածության, հետևյալ տոկոսն եյին կազմում.

|                                | 1923      | 1925    |
|--------------------------------|-----------|---------|
| Ծանքս չունեցողներ . . . . .    | 18,01% —  | 15,26%  |
| 0,1-ից մինչև 1 դեպ. . . . .    | 50,34 » — | 39,21 » |
| 1,1-ից » 2 » . . . . .         | 18,77 » — | 24,83 » |
| 2,1-ից » 4 » . . . . .         | 9,66 » —  | 16,26 » |
| 4,1-ից » 6 » . . . . .         | 2,19 » —  | 3,10 »  |
| 6,1 դեպյատինից բարձր . . . . . | 1,03 » —  | 1,34 »  |
|                                | 100,0 » — | 100 »   |

Գյուղացիության տնտեսական դրության ընդհանուր բարձրացումը կասկածից դուրս է։ Աղքատների թիվը նվազում է, միջնակիների թիվն արագ կերպով աճում։

Անցնենք այժմ անասնապահության ապրած վիճակին։ Դեռ մինչ պատերազմը անային կենդանիներով մեր գյուղացին չափազանց աղքատ էր։ 1914—19 թ. թ. ընթացքում նա կորցրեց իր անասունների յերկու յերրորդից ավելին (68,38 տոկոսը)։ Ընդամենը մի քանի տարվա ընթացքում այդ խոշոր կորուստի լրացումը միանգամայն անհնարին էր, մանավանդ խոշոր յեղջուրավոր կենդանիների և ձիերի վերաբերմամբ։ Իսկ արտաքին շուկայում այդքան մեծ քանակի կենդանիներ ձեռք բերելը վեր է և՛ կառավարության և՛ իշխանության ուժերից։ Պետք է նկատի առնել, Վոր 1914—1919 թ. թ. ընթացքում Հայաստանի գյուղացին կորցրել է 454 հազար խոշոր յեղջուրավոր կենդանի, մոտ 32 հազար՝ ձի, մի միլիոնից ավելի վոչխար և այծ։ Այդքան անասուններ վնասվել համար պահանջվում է վոչ պակաս, քան 50—60 միլիոն ուրբլի։

Անասնապահության զարգացման գործում անհնարին է այն թուլիքները կատարել, Վորոնց հանդիպեցինք հողագործության զանազան ճյուղերում։ Բայց և այնպես, գանդաղ աճումը յերկել և անընդհատ և մեր անասունների ընդհանուր թիվը 1914 թ. դրության հետ համեմատած՝ 31,62 տոկոսից 1919 թվին բարձրացել է մինչև 80,2 տոկոս 1925 թվին։ Անասնապահության զարգացման մասին պարզ գաղափար կազմելու համար հետևյալ աղյուսակն ենք տալիս.

|                                  | 1919    | 1923      | 1925      | 1925 թ. տոկոսը 1914 թ. վերաբերմ. |
|----------------------------------|---------|-----------|-----------|----------------------------------|
| Բոլոր անասունների թիվը . . . . . | 743.643 | 1.139.820 | 1.805.477 | 80,2                             |
| Խոշոր յեղջ. կենդանի . . . . .    | 229.512 | 434.855   | 643.646   | 92,8                             |



|                  |          |          |          |       |
|------------------|----------|----------|----------|-------|
| 2ի . . . . .     | 19.862—  | 19.170—  | 27.153—  | 52,8  |
| Վոյսար . . . . . | 405.721— | 544.646— | 966.873— | 70,1  |
| Այծ . . . . .    | 65.183—  | 101.282— | 193.480— | 104,0 |
| Խոզ . . . . .    | 5.607—   | 21.160—  | 34.010—  | 14,40 |

1914 թ. գրության վերականգնումը չի կարող վոչ գյուղացիության և վոչ խորհրդային իշխանության վերջնական նպատակը կազմել: Իր 80 տոկոսով անասնապահությունը վերականգնած է, սակայն գյուղացիության կեսը զուրկ է բանվոր կենդանիներից, իսկ նրա մի քանորդը վոչ մի անասուն չունի: Այդ մասին գոյություն ունեցող թվական տվյալներն ահա ինչ են մեզ ասում: Հայաստանի 160 հազար գյուղացիական տնտեսությունները, ըստ իրենց ունեցած անասունների թվի, հետևյալ կարգերի յեն բաժանվում.

|                                        |         |
|----------------------------------------|---------|
| Անասուններից բոլորովին զուրկ . . . . . | 24,66%  |
| Կթի անասուններից զուրկ . . . . .       | 37,11 » |
| Կթի խոշոր անասուններից զուրկ . . . . . | 43,73 » |
| Յեզ և զոմեշ չունեցող . . . . .         | 56,26 » |

Այստեղից պարզ է, վոր 1914 թվի գրությունը վերականգնել, դեռ չի նշանակում գյուղացու անային կենդանիներով ապահովել: Հայաստանում յեղած անասունների թիվը հարկավոր է վոչ թե 20 տոկոսով ավելացնել (1914 թ. գրությանը համեմատ համար), այլ հարկավոր է կրկնապատկել ու յեռապատկել:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՄԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

Գյուղացու գոյության նյութական ու բարոյական մակարդակի աճումը կախված է վոչ այնքան նրա ցանքսի տարածությունից և կենդանիների թվից, ինչքան նրա արտադրության յեղանակից և նրա շնորհից՝ իր տնտե-

սությունը գիտական հիմունքներով կազմակերպել: Մեր հողթողիմաստի տրամադրության տակ յեղած նյութական հնարավորությունների սահմաններում, գյուղացիությանն ագրոնոմիական և այլ անհրաժեշտ ոգնություն է ցույց տրվում, նրա արտադրությունը կանոնավորելու և այն գիտական հիմունքների վրա դնելու համար: Հողաշինարարական աշխատանքները, վորոնք օրդեն ավարտվելու վրա յեն, վոսոգման գործը, կենդանիների և բույսերի բժշկությունը, ագրոնոմիական ոգնությունը, գյուղացուն ագնվացիկ կենդանիներ և կատարելագործված գործիքներ մատակարարելու գործը, գյուղատնտեսական ցուցահանդեսները և այլն, միևնույն նպատակին են ծառայում՝ գյուղատնտեսական արտադրության բոլոր ճյուղերը բարձրացնելու նպատակին:

Սակայն միայն այդ ուղղությամբ գործելով, գյուղացին դեռ ընդունակ չի դառնում ոգտագործել բնական այն բոլոր հարստություններն ու ուժերը, վորոնց ոգտագործումը ժամանակակից բարձր տեխնիկան և գիտությունը հնարավոր են դարձնում: Խնդիրը նրանում է, վոր մեր գյուղացու տնտեսությունը մանր տնտեսություն է, իսկ մանր արտադրության նեղ շրջանակներում անհնարին է ընթացիկ շատ նպատակահարմար կերպով ոգտագործել թե ժամանակակից կատարելագործված մեքենաներն ու գործիքները և թե զարգացման բարձր աստիճանի հասած գիտությունները: Սակայն, այդ գրությունից զուրա գալու ճանապարհ կա և այդ ճանապարհը գյուղատնտեսական կոոպերացիան է՝ մանր տնտեսությունների և թույլ ուժերի միացումը խոշոր արտադրություն կազմակերպելու նպատակով: Տգետ կամ փաթեցի ու հախանդափոխական է ամեն ձեզը, ով գյուղացուն խորհուրդ է տալիս «կուլտուրական լինել», արտադրության ուսցիտնալ յեղանակների անցնել, բայց գյուղացուն միաժամանակ չի



հասկացնում, վոր նրա մանր արտադրութիւնը հարստացման և կուլտուրական զարգացման ամենավտխերիւթ թըշնամին և նրա դարավոր սորկության, աղքատության և տղիտության հիմնական պատճառը:

Այս հանգամանքը նկատի առնելով, խորհրդային իշխանութիւնն ամեն կերպ աջակցում և գյուղատնտեսական կոոպերացիայի բոլոր տեսակների զարգացմանը, վորպեսզի աշխատավոր գյուղացիութեանը հնարավորութիւն տա ուժերի միացման միջոցով խոշոր արտադրութիւն կազմակերպել, ինչպիսին որինակի համար պանրագործարանները: Գյուղատնտեսական կոոպերացիան մանր և միջակ գյուղացիութեան համար միակ միջոցն է՝ թե իր տնտեսութիւնը բարձրացնելու և թե աստիճանաբար սոցիալիստական տնտեսութեան և սոցիալիստական հասարակակարգի անցնելու համար: Այդ կոոպերացիայի մի քանի տեսակները մեզ մոտ արդեն գոյութիւն ունեն և մեծ հաջողութեամբ գործում են: Առ 1-ն հոկտեմբերի 1925 թ. Հայաստանում 71 կաթնատնտեսական արտել կար, 5.325 անգամով, 30 վարկային ընկերութիւն՝ 11.492 անգամով, 9 այգեգործական ընկերութիւն՝ 875 անգամով, 16 մեղվարուծական ընկերութիւն՝ 693 անգամով, 15 խառն գյուղատնտեսական ընկերութիւն՝ 509 անգամով և մի քանի այլ ընկերութիւններ: Բոլոր կոոպերատիվ կազմակերպութիւնների թիվն է 147: Վերջիններիս շուրջը կազմակերպված է մոտ 20.000 տնտեսութիւն:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե ինչքան արագ և աճում մեր գյուղատնտեսական կոոպերացիան:

|                       | Առ 1-ն հունվր. 1924 թ. | Առ 1-ն հոկտ. 1924 թ. | Առ 1-ն հոկտ. 1925 թ. |
|-----------------------|------------------------|----------------------|----------------------|
| Կոոպերատիվների թիվը . | 13                     | 76                   | 147                  |
| Անգամ տնտեսութ. » .   | 1.384                  | 8.919                | 19.153               |

19 ամսվա ընթացքում կոոպերատիվների թիվն աճել է 11,3 անգամ, իսկ կոոպերացման յենթարկված տնտեսութիւնների թիվը — 11,6 անգամ: Գյուղացիական տնտեսութիւնների կոոպերացման ասպարիզում մինչև որս ունեցած հաջողութիւններն աներկբայելի ապացույց են այն բանի, վոր այդքան հաջող կերպով սկսած գործն առաջիկա տարիներում նոր ու նոր հաջութիւններ և տանելու:

Գյուղկոոպերացիայի քանակային աճմանը կատարելապես համապատասխանում է և նրա աշխատանքը: 1925 թ. հայգյուղկոոպի արտադրական ոպերացիաները 1.222.500 ռուբլու արժեք են ներկայացնում: Այդ գումարի մոտ կեսը պանրի վրա յե ընկնում: Այս տարվա ընթացքում մեր կոոպերատիվներն արտադրել են.

|                        |                      |            |        |
|------------------------|----------------------|------------|--------|
| Շվեցարական պանիր       | 12.000 փ.            | 300.000 ո. | արժեքի |
| Թուշի                  | 20.000 ».            | 240.000 »  | »      |
| Շերամի սերմ (ձու)      | 26.000 ա.            | 52.000 »   | »      |
| Պամիդորի և այլ սլյուրե | 10.000 փ.            | 60.000 »   | »      |
| Դինի . . . . .         | 100.000 <sup>0</sup> | 20.000 »   | »      |
| Սպիրտ . . . . .        | 100.000 <sup>0</sup> | 28.000 »   | »      |
| Պատրաստել է՝ ձու       | 1 միլլիոն            | 30.000 »   | »      |

Առաջիկա գյուղատնտեսական տարում հայգյուղկոոպը ծրագրում է իր անգամներին 130.000 ռուբլու տրակտորներ և գործիքներ մատակարարել:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական կոոպերատիվների կազմին, նրանց անգամների 80—90 տոկոսը չբավոր և միջակ գյուղացիներ են:

## ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսութեան աճումը գործարանային արդյունաբերութեան հիմք ստեղծեց: Պետք է նկատի առնել նաև, վոր իր զարգացման մի վորոշ աստիճանի վրա գյու-



դատնետեսությունն անհրաժեշտորեն գործարանային արդյունաբերությունն է ծնում: Այսպես, որինակ, զարգացած կաթնատնտեսությունն առանց պանրի գործարանների անհնարին է: Իսկ գյուղատնտեսության վորոշ ճյուղեր առանց գործարանային արդյունաբերության լայն չափեր ընդունել չեն կարող: Այսպես է որինակ բամբակագործությունը կամ խաղողի կուլտուրան: Զարգացած գյուղատնտեսությունը գործարանային արդյունաբերությունն է պահանջում ու յենթադրում, իսկ գոյություն ունեցող գործարանային արդյունաբերությունն, իր կողմից, գյուղատնտեսության աճմանը զարկ է տալիս, գյուղատնտեսությամբ զբաղվելը շահավետ է դարձնում: Ահա ինչու մեր գործարանային արդյունաբերության առաջացումն ու աճումն ամենամեծ չափով նայել գյուղացուն է վերաբերում, նրան վերաբերում է վոչ միայն վորպես սպառողի, այլ և վորպես արտադրողի ու վաճառողի:

Խորհրդային Հայաստանում գործարանային արդյունաբերության չորս հիմնական ճյուղ է ստեղծվել — բամբակագործ, մանվածքային, սպիրտի և պանրի գործարանները: Մեր բամբակագործ գործարանները բավարարում են յերկրի ամբողջ պահանջը և կառարելագործված մեքենաներով են կահավորված: Մանվածքային ու գործվածքային արդյունաբերությունը մեղ մոտ մեծ ապագա ունի: Լենինականի և Ղարաբաղի յերկայիս գործարանների հետ միասին, մինչև 1930 թ. Հայաստանում կունենանք 3 խոշոր գործարան բամբակի կտորեղեն պատրաստելու համար, 1 — բրդե գործվածքների և մեկը — չթի համար: Այդ գործարանների կառուցման և տեխնիքական կահավորման ծախսը կազմում է մոտ տասն և մեկ ու կես միլիոն ուրբլի: Անդրկովկասի և համամիութենական պետականների կողմից այդ ծրագիրն արդեն հաստատված է: Պետք է յենթադրել, վոր մինչև 1935 թ. Հայաստանի

մանվածքային արդյունաբերության մեջ վոչ պակաս քան 10.000 բանվոր կաշխատի: Ինչ վերաբերում է պանրի գործարաններին, բացի գոյություն ունեցող կոոպերատիվ գործարաններից հողժողկոմատը 11 նոր գործարանի շենքեր է կառուցում: Այդ բոլոր գործարանները կսկսեն աշխատել 1926 թ.: Սպիրտի գործարանների վրա կանգ չենք առնում, վորովհետև նրանք բոլորին հայտնի յեն (Յերեվանի և Ղամաբլվի յերկու խոշոր գործարանները):

Մեր արդյունաբերության խոշորագույն և մեծ ապագա խոստացող ճյուղերից մեկն էլ լեռնագործությունն է: Ինչպես հայտնի յե, մեր յերկու գլխավոր պղնձահանքերում և նրանց գործարաններում զաշնակցության որով արտադրություն չկար: Այժմ գործում են թե Ալլահվերդիի և թե Ղափանի հանքերը:

Գործարանային արդյունաբերության հետ միասին անհրաժեշտ է հիշատակել մեր ելեկտրոկայանները, առաջին հերթին՝ Լենինականի և Յերևանի խոշոր կայանները, վորոնք գլխավորապես արտադրական նպատակների յեն ծառայելու: Գյուղատնտեսության մեջ էլ ելեկտրական եներգիային ամենամեծ տեղն է տրվում:

Բացի այդ խոշոր գործարաններից, Յերևանում և Լենինականում գործում են մի շարք մանր գործարաններ (աճառի, կոնսերվի, զարեջրի, ծխախոտի, բրինձ մաքրող, մեխանիկական, խալիչայի և այլն), վորոնց վրա կանգ առնելն այստեղ անհնարին է:

Անհրաժեշտ է հիշատակել, վոր պղնձի արտադրության վերականգնումը և մանվածքային արդյունաբերության կազմակերպումը հնարավոր էլին միայն այն պատճառով, վոր խորհրդային Հայաստանը Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Խորհրդային Միության կազմի մեջ է մտնում: Իր սեփական միջոցներով նման խոշոր գործերի ձեռնարկել մեր խորհրդային իշխանությունը դեռ չի կա-



բող: Հայաստանի ամբողջ գործարանային արդյունաբերությունը վոչ թե մասնավոր մարդկանց, այլ բանվորաշխուղացիական իշխանություն սեփականություն է:

### ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՌԴԵՐԱՑԻԱ

Տնտեսության վերականգնման հետ միասին վերականգնեց ու ընդարձակվեց նաև մեր սպառողական կոոպերացիայի ցանցը: Այս խնդրի պարզաբանման համար սահմանափակվում ենք միայն մի քանի թվական տվյալներ առաջ բերելով. Առ 1-ն հունվարի 1924 թ. և առ 1-ն ապրիլի 1925 թ. Հայաստանի սպառողական կոոպերացիան հետևյալ պատկերն էր ներկայացնում.

|                                            | 1/I 1924 թ. | 1/IV 1925 թ. |
|--------------------------------------------|-------------|--------------|
| Կոոպերատիվ ընկերութ.                       | 43          | 81           |
| խանութներ                                  | 60          | 254          |
| անդամ                                      | 8.064       | 40.140       |
| Փայադրամագլուխ                             | 27.728 ռ.   | 117.628 ռ.   |
| Հիմնական դրամագլուխ                        | 11.932 »    | 216.328 »    |
| Ապրանքային շրջանառութ.<br>(միլիոն ամսական) | 410.000 »   | 746.000 »    |

15 ամսվա ընթացքում ընկերությունների թիվը կրկնապատկվել է, խանութների թիվը—քառապատկվել, անդամների թիվը—հնգապատկվել, փայադրամագլուխների գումարը—սովորի քան քառապատկվել և հիմնական դրամագլուխն աճել է 18 անգամ:

Խորհրդային յերկրներում սպառողական կոոպերացիայի վրա կրկնակի պարտականություն է դրվում—իր անդամներին աժան ու բարձր փորակի ապրանք մատակարարել և մասնավոր առևտրական կապիտալի դեմ կռվել վոչ միայն դներն իջեցնելու նպատակով, ինչպես այդ

բուրժուական կոոպերացիան և անում, այլ և այդ կապիտալը վերացնելու, նրան սպանելու նպատակով:

Մեր սպառողական կոոպերացիան աճում է, սակայն նրա անդամների ակտիվությունը դեռ աննշան չափով և նկատվում: Այս հանգամանքը մեր սպառողական կոոպերացիայի ամենացավոտ կողմն է, վորի վրա առաջիկայում կոոպերատիվ կազմակերպություններն ամենալուրջ ուշադրություն են դարձնելու:

Խորհրդային կոոպերացիան միայն աժան ապրանքներ մատակարարող հիմնարկություն, միայն բարեխիղճ մարդկանց խանութ չէ: Մեր կոոպերացիան դեմոկրատիկ, մասսայական ակտիվության հիմնարկություն և սոցիալիզմին ձգտող կազմակերպություն է: Նա կկադի յերկու փոքրով, յեթե կոոպերացիան յենթարկված մասսաներին չկարողանա իր շուրջը հավաքել, նրանց թելադրանքով ու նրանց ցանկություն համապատասխան գործել և իր բոլոր աշխատանքներին նրանց մասնակից անել:

Մեր կոոպերացիայի բացերից մեկն էլ այն է, վոր կոոպերատիվ, ընկերությունների վերաստուգիչ հանձնաժողովները՝ շատ թույլ և անկանոն են աշխատում:

### ԲԺՅԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Նոր կազմակերպված խորհրդային իշխանության առաջ կանգնած խոշորագույն խնդիրն էր այս ասպարիզում պայքարել համաճարակների դեմ և գուզահեռարար բժշկական գործը վերականգնել: Համաճարակների լիկվիդացիայից հետո միայն ստեղծվեցին պայմաններ՝ քարուքանդ յեղած բժշկական գործը վերականգնելու համար:

Խորհրդային իշխանության որոք, 5 տարվա ընթացքում, բուժհիմնարկների ցանցը կրկնապատկվեց և յեռապատկվեց:

Բուժակալայանների թիվը հեղհետե մկսեց պակասել, բժշկակայաններինը ալեւացավ 2—3 անգամ:



Թե քաղաքների և թե գյուղական բուժհիմնարկների թիվը (հիվանդանոցներ, բժշկա և բուժական կայաններ և այլն) 24-ից հասավ 58-ի, չհաշված տրոպիկական կայանները: Հիվանդանոցներին կից բացված են լաբորատորիաներ, մի բան, վոր առաջ գոյություն չունեն: Բժիշկների թիվը քաղաքում ավելացավ 5—6, իսկ գյուղերում 2—3 անգամ: ավելացավ նաև մանկաբարձուհիների և այլ մասնագիտությունների բժշկական աշխատավորների թիվը:

Ահա մի քանի թվական տվյալներ այդ մասին.

#### Բուժհիմնարկներ

| Թվեր    | Հիվանդանոց |      | Բուժարաններ |      | Բժշկ. կայաններ |      | Բուժական կայաններ |      | Առաժնային կաբինետներ |      | Լաբորատորիա |      |
|---------|------------|------|-------------|------|----------------|------|-------------------|------|----------------------|------|-------------|------|
|         | Քաղ.       | Երկ. | Քաղ.        | Երկ. | Քաղ.           | Երկ. | Քաղ.              | Երկ. | Քաղ.                 | Երկ. | Քաղ.        | Երկ. |
| 1913 թ. | 5          | —    | 5           | —    | 2              | 11   | —                 | 13   | —                    | —    | —           | —    |
| 1919    | 11         | 10   | 5           | 1    | —              | 2    | —                 | 10   | —                    | —    | —           | —    |
| 1921    | 16         | 8    | 14          | 2    | —              | 13   | —                 | 8    | —                    | —    | —           | —    |
| 1923    | 14         | 8    | 14          | 8    | —              | 12   | —                 | 11   | —                    | —    | —           | —    |
| 1924    | 16         | 8    | 18          | 12   | —              | 19   | —                 | 8    | —                    | —    | —           | —    |
| 1925    | 14         | 8    | 18          | 14   | —              | 27   | —                 | 4    | 7                    | 2    | 6           | 5    |

#### Աշխատավորներ

| Թվեր    | Բժիշկներ |      | Մանկաբարձուհի |      |
|---------|----------|------|---------------|------|
|         | Քաղ.     | Երկ. | Քաղ.          | Երկ. |
| 1913 թ. | 19       | 13   | 22            | 10   |
| 1919    | 29       | 17   | —             | —    |
| 1921    | 111      | 31   | —             | —    |
| 1923    | 76       | 32   | 18            | 10   |
| 1924    | 111      | 31   | 20            | 13   |
| 1925    | 102      | 44   | 31            | 23   |

Բժշկական ոգնությունը վորակավորված դարձավ: Ներկայումս բացի խառն տեղի հիվանդանոցներից կան՝ մանկական հիվանդանոց — 80 մահճ. 40 յերելայի մանկատան հետ, հոգեկան հիվանդանոց — 25 մահճ, վորը լայնացվելու յե մինչև 50 մահճ, սանատորիում՝ պալարախտա-

վորների համար՝ 75 մահճակալով, Տրոպիկական Խնստիտուտ, վոր տրոպիկ հիվանդությունների դեմ պայքարող հիմնարկների շարքում առաջնակարգ տեղ ե բռնում համաբուժական մասշտաբով:

Կլինիկական հիվանդանոցին կից կան բնագետական և ֆիզիոթերապևտիկ կաբինետներ. 10 մահճակալ ունեն հիվանդանոցում տրամադրված են ներվային հիվանդների:

Աչքի ոգնությունը ապահովված ե լիովին Յերեանում և Լենինականում:

1923 թ. լայն պայքար ե սկսված մալարիայի դեմ: Ներկայումս գործում են 8 տրոպիկական կայան և 13 մալարիային խմբեր, այն ինչ մինչ խորհրդայնացումը մալարիայի դեմ պայքար չեք տարված բոլորովին:

Յերեանում բացված ե վեներաբանական դիսպանսեր: Նույնպեսի դիսպանսեր յենթադրվում ե բանալ նաև Լենինականում: 1924 թ. ամառը Լենինականի և Փ. Լոռու գավառներում աշխատել են վեներական հիվանդությունների դեմ պայքարող 3 խումբ:

Անց ե կացված լայն ծաղկահատություն և ազգաբնակչության մեծամասնությունն արդեն պատվաստված ե: Հաջորդ տարում վերջանալու յե բոլորի ծաղկահատությունը:

Յերեանում և Լենինականում կազմակերպված ե հատուկ սանիտարական հսկողություն, վորը այլ քաղաքներում հանձնարարված ե առանձին բժիշկներին: 1925—26 թ. բոլոր գավառներում լինելու յեն սանիտարական բժիշկներ:

3 քաղաքում և 3 գյուղում կան մայրություն և մանկություն պաշտպանություն կոնսուլտացիաներ: Շուտով այդպիսիները կազմակերպվելու յեն նաև այլ քաղաքներում:

Բարեկամվող սանիտ. պայմանների շնորհիվ Հայաս-



տանում համաճարակները հազվագյուտ են դարձել, իսկ վերջերս նույն իսկ բոլորովին չեն նկատվում:

1922 թվից գործում է Գլխիշանի սանատորիումը 75 մահճակալով պալատապետների համար: 1925 թվից բացի ապահովագրվածներից ուղարկվում են կուրորտներ նաև գյուղացիները: Գյուղացիների կուրորտային բուժօգուլթյան գործը հետզհետե ընդլայնացվում է:

Արգելում այս տարի բացված է բաժնեկուրտական կուրորտ:

Հաջորդաբար ընդարձակվում է սանիտարական լուսավորական գործը:

Շատ բան է արված ապահովագրվածների բժ. ոգնության ընդառնադրում: Նրանց բժշկական ոգնություն ստանում են առաջին հերթին, ուղարկվում են կուրորտներ և սանատորիաներ:

Մահճակալների թիվը հանրապետության մեջ ավելացել է 5 անգամ՝ 172-ից մինչև 939:

1923 թ. գյուղերում 44 մահճակալ կար, իսկ այժմ նրանց թիվը 170-ի յե հասնում:

Ամբողջ հանրապետության մեջ 1923 թ. ամեն մի հազար բնակչից հիվանդանոց եր ընդունվում 12,5 մարդ, իսկ 1925 թ. 1',6 մարդ: Նույն հաշվով մահճակալ—որերն են 1924 թ.—193, իսկ 1925 թ.—208:

Բուժարաններ գիմոդների և այցելողների թիվը տարեց-տարի աճում է: 1923 թ. առաջինների թիվն եր 220.067, իսկ յերկրորդներինը 527.400, այն ինչ 1925 թ. առաջին կիսում այդ թվերն աճել են մինչև 213.621 և 554.271, այսինքն, ամբողջ տարին նկատի առնելով, 98 և 109 տոկոսով:

## Ժողովրդական Լուսավորութուն

Պորհրդային Հայաստանը միաժամանակ խորհրդային և սոցիալիստական հանրապետություն է: Ինչպես վերելում տեսանք, կազմակերպված ու գիտակից մասսաների ակտիվ մասնակցությունը խորհրդային իշխանության ամբողջ շինարար աշխատանքին, նրա հաջողությունների ու նվաճումների հիմնական պայմանն է: Պորհրդային ամեն մի հանրապետության ամենամեծ հարստությունը և ամենագորեկ կապիտալը կազմակերպված և հեղափոխականորեն—գիտակից աշխատավոր մասսաներն են, իսկ ուժեղ կազմակերպությունը և բարձր գիտակցությունն առանց գրագիտության և առանց գիտելիքների մի վորոշ պաշարի անհնարին են:

Գյուղացին և բանվորը անգոր կլինեն իրենց անտեսությունը գիտական հիմունքների վրա դնել, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել, ժամանակակից կատարելագործված տեխնիկայից ու զարգացման բարձր աստիճանի հասած գիտություններից ոգավել, սեփական ուժերով կատարելագործված մեքենաներ արտադրել ու գիտություններ մշակել, անգոր կլինեն բարձր անտեսության և վարթամ կուլտուրա ունեցող կապիտալիստական յերկրների հետ մրցել և Պորհրդային Միության սահմաններում սոցիալիստական անտեսություն ու սոցիալիստ. կարգեր հաստատել, յեթե աշխատավոր լայն մասսաների անդրադիտության վերացումը և նրանց մտավոր ու կուլտուրական մակարդակի աճումն իրենց համար հարվածային խնդիր չդարձնեն, յեթե իրենց մտավոր ու կուլտուրական զարգացման գործի վրա չնայեն վորպես իրենց վերջնական ազատագրման ամենապարեկ ու ամենագորեկ գեներից մեկի վրա: Յեթե խորհրդային իշխանությունը, միայն վորպես այդպիսին, ժողովրդական լուսավորության



ամենամեծ արժեք և վերագրելու, պետք է ընդունել, վոր այդ արժեքը կրկնապատիկ ու յեռապատիկ աճելի մեծ է լինելու այն իշխանության համար, վորը միաժամանակ և խորհրդային և սոցիալիստական է:

Այս և պատճառը, վոր ուղղմական և անտեսական ֆրոնտներում իր պատմական հաղթանակները տանելուց հետո խորհրդային իշխանությունը մի նոր ֆրոնտ հայտարարեց, թվով յերրորդը՝ աշխատավոր մասսաների շարքերից անգրագիտությունը, աղիտությունը և անկուլտուրականությունը վերացնելու համար: Ինչպես խորհրդային մյուս հանրապետություններում, այդ յերրորդ ֆրոնտն ընդունված է նաև խորհրդային Հայաստանում:

Աշխատավոր մասսաների մտավոր և ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործը մեզ մոտ միայն մի խոչընդոտի յե հանդիպում, այն է՝ նյութական միջոցների պակասին: Խորհրդային կարգերն այդ ասպարիզում վորևե քաղաքական արգելք սահմանել չեն կարող: Ընդհակառակը, կըթված ու գիտակից աշխատավորության մեջ խորհրդային կարգերի գոյության և սոցիալիզմի հաղթանակի ամենակարեւոր գրավականներից մեկը տեսնելով, խորհրդային իշխանությունը շահագրգռված է այդ ասպարիզում մաքսիմում աշխատանք թափել, ժողովրդական լուսավորության գործի վրա մաքսիմում միջոցներ զործադրել:

Այդ ուղղությամբ է, վոր լուսավորության ֆրոնտում գործում է մեր իշխանությունը բոլոր խորհրդային հանրապետություններում:

Դպրոցական գործը Հայաստանում տամայակ տարիների պատմություն ունի: Սակայն, վերջին տարիներին թիվացելով միայն, վոր նա վոչ միայն կանոնավորվում է և արագ զարգացման հնարավորություն է ստանում, այլ

և բոլորովին նոր հիմունքների վրա յե դրվում՝ աշխատանքային և կոմունիստական հիմունքների վրա: Դպրոցական գործի զարգացումը 1913-14 ուսման տարուց սկսած հետևյալ պատկերն է ներկայացնում:

1-ին և 2-րդ աստիճանի դպրոցներում, 9-ամյակներում և բանֆակներում, արհլուավարական և բարձրագույն դպրոցներում աշակերտների, ուսանողների և դասատուների հետևյալ թիվն է յեղել.

|                                                           | 1913-14 թ. | 1919-20 թ. | 1924-25 թ. | 1924-25 թ.<br>հարաբերութ.<br>1913-14 թ.<br>(սոկոսով) |
|-----------------------------------------------------------|------------|------------|------------|------------------------------------------------------|
| Բոլոր դպ. թիվը                                            | 465        | 459        | 808        | 173,7                                                |
| աշակերտութ.                                               | 35.414     | 52.678     | 88.698     | 250,5                                                |
| ուսուցչություն                                            | 1.177      | 1.486      | 2.751      | 233,7                                                |
| յերկրի բնակչության ամեն մի հազար հոգուց դպրոց եր հաճախում | 30         | 41         | 88         | 293,3                                                |

Ինչպես կյանքի բոլոր մյուս ասպարեզներում, դպրոցական գործում ել ասարբեր ազգությունների մեջ խորհրդային իշխանությունը վորևե խտրություն չի դնում: Ընդհակառակը, նկատի առնելով Հայաստանում բնակվող վորոշ ազգությունների ծայրահեղ կուլտուրական հետամնացությունը և ձգտելով նրանց կուլտուրական մակարդակը յերկրի ընդհանուր կուլտուրական մակարդակին հավասարեցնել, խորհրդային իշխանությունը նրանց իր ուղադրության հատուկ առարկա յե դարձնում:

Գլխադպրուստարի գծով հետևյալ հիմնարկներն են աշխատում. 509 անգրագիտության և կիսագրագիտության լիկվիդացիայի կայան՝ 15.437 ուսանողով, 405 խրճիթ-



ընթերցարան, 18 թատերական բեմ, 21 տիուժը, 4 կինո,  
4 յեռամյա բարձր տիպի դպրոց՝ 751 ուսանողով, 4 խոր-  
հրդային-կուսակցական դպրոց՝ 187 ուսանողով և մի շարք  
այլ հիմնարկներ:

Արտադպրոցական կրթության ու լուսավորության  
գործին խորհրդային իշխանությունն քաղաքական ահա-  
գին նշանակություն է տալիս:

Հայաստանի խորհրդային իշխանության 5-ամյա գո-  
յությունը և 5-ամյա նվաճումները տնտեսական, քաղա-  
քական ու կուլտուրական կյանքի անխափր բոլոր առաջա-  
րեգներում նրա պաշտպանած սկզբունքների լավագույն  
ապացույցը և նրա ձգտած նպատակների վերջնական  
հաղթանակի լավագույն յերաշխիքն են:

Հ. Ս. Խ. Հ. Կոմկուսի Կենտկոմի  
Ազիս-պրոպ Բաժին





